

ԿՃՂԱԿՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Կադույությունները, որոնք կճղակների հիվանդությունների ախտանիշ են, առաջ են բերում կենդանիների մթերատվության անկում:

Կճղակների ախտահարման պատճառները շարք են՝

- անասնագոմի շարք կոպիտ և սխալ թեքությամբ հասարակը
- կեղտոտ վայրում կենդանու պահելը
- կճղակների գոմադրով կեղտոտվածությունը
- քարքարոտ և աղտոտված արոտները
- կենդանու շարք երկար կանգնած մնալը
- սխալ կերակրումը և այլն

Կովն օրական պեղք է 12-14 ժամ հանգստանա: Այդ ժամանակի կրճարման պատճառով մեծանում է կճղակների ախտահարման հավանականությունը:

Մեծ քանակությամբ օսլա և քիչ թաղանթանյութ պարունակող կերերով երկարաբազ կերակրելը ևս հանգեցնում է կճղակների ախտահարման:

Յուրաքանչյուր ֆերմեր իր կենդանու կաթնատվության և մատուցության բարձր մակարդակը պահպանելու համար պետք է մշտապես հետևի կճղակների վիճակին՝ տարեկան 1-2 անգամ կանխարգելիչ նպատակով մշակելով դրանք, հետազոտելով ավելորդ զերածած հատվածները՝ կճղակին տալով իր նախկին բնական տեսքը, ինչպես նաև կիրառելով ախտահանիչ վաննաներ:



Վաննաներում որպես ախտահանիչ նյութ կարելի է օգտագործել **Ֆորմալդեհիդի 2-5%-անոց լուծույթ, պղնձարջասպի (կապույտ շիք) 5-10%-անոց լուծույթ** և այլն:

Շարք կարևոր է՝


- վաննաները փեղադրել այնպեղ, որ փեղով անցնում է կենդանիների ամբողջ գլխաքանակը, որպեսզի ոչ մի կենդանի չըջանցի վաննան: Ցանկալի է, որ այն լինի անասնաշենքի մուտքի դիմաց
- վաննայի երկարությունը պեղք է լինի 2-3մ, լայնքը՝ 1մ, խորությունը՝ 15սմ
- ախտահանիչ վաննայից առաջ պեղք է լինի սովորական ջրով լցված մեկ այլ վաննա, որում մաքրվելուց հետո կենդանիները մաքուր կճղակներով անցնում են ախտահանիչ վաննայով
- մոտ 200-250 կովի անցնելուց հետո պեղք է հեղուկը փոխել
- կճղակները ախտահանվելուց հետո կենդանիները պեղք է փեղավորվեն մաքուր փարածքում:

Նշված նյութերի հետ պեղք է աշխատել զգույշ Դոզավորման խախտման դեպքում հնարավոր են քիմիական այրվածքներ: Ֆորմալդեհիդը ունի գազ արձակելու հատկություն:

Կապույտ շիքն օժտված է նաև սնկասպան հատկությամբ:

Նշված նյութերով պարարտարված վաննաները կանխում են կադույությունները, որի արդյունքում նաև մթերարվության կորուստը:



 Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Cooperation Office
South Caucasus

 SDA Strategic Development Agency
Strategies for Development